57-ՐԴ ՆԻՍՏ

7 հունվարի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են խնամատարության, զորական, լուսավորության, ֆինանսների և իրավարարության մինիստրները:

Նախագահ - Հայտարարում է, որ բծավոր տիֆի համաճարակի պատճառով այսուհետև խորհրդարանի դռները փակ կլինեն հասարակության առաջ:

Ա. Բաբալյան - Զեկուցում է մասնակի զորացրման օրինագծի մասին: Օրինագիծը Գ ընթերցումով ընդունվում և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է ներքին գործոց մինիստրության անունով 8.200 ռ. վարկ բանալ՝ Սինոդի ծառայողներին նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռոճիկները տալու և դիվանագիտական ծախքերի օրինագծի մասին:

Խորհրդարանն ընդունում է օրինագիծը:

Նույնը զեկուցում է պետական հիմնարկություններում ծառայողների ռոճիկները 30 տոկոսով ավելացնելու և ամսական ռոճիկի չափով նպաստ տալու (միանվագ) օրինագծի մասին, որ խորհրդարանն ընդունում և հանձնում է խմբագրական հանձնաժողովին:

Նույնը զեկուցում է Հայաստանի չքավոր ազգաբնակչության (ոչ գաղթական) համար սննդակայաններ ու թեյարաններ բանալու օրինագծի մասին:

Գ ընթերցումով խորհրդարանն ընդունում է օրինագիծը և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Ն. Աղբալյան - Զեկուցում է զորական մինիստրության նախահաշվի մասին:

Նկատի ունենալով, որ ֆրակցիաներում չի քննված այդ նախահաշիվը, խորհրդարանը որոշում է հետաձգել քննությունը մինչև հաջորդ նիստը:

Նիստը փակվեց ժ. 12-ին:

«Զանգ». 24 հունվարի 1919թ.